Հավելված N 1
ՀՀ ֆինանսների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 09-ի
N 427-Ա հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի ապրիլի 17-ի N 3 որոշմամբ

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՃԴ-ՀԲՄԱՊՁԲ-2026/01**

Պատվիրատուն՝ **«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը**, որը գտնվում է **ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հասցեում, հայտարարում է հրատապ բաց մրցույթ, որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **լաբորատոր սարքավորումների** մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող պայմանները սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Սույն ընթացակարգի նկատմամբ կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրի դրույթները, եթե գնման գինը գերազանցում է Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրով սահմանված շեմերը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված **17**-րդ օրվա ժամը **17:00**-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված **17**-րդ օրը ժամը **17:00**-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Մարգարիտա Եղիյանին:**

Հեռախոս՝ **010 54 21 76**
Էլ. Փոստ՝ **procurement@armroad.am**
Պատվիրատու՝ **«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ**